



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1875 ՎՍԻՆ

ԿՐՏԱԿ

24 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1875



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻՔԱՅԻԼԵԱՆ

1875

անձնական տիրութեան պատճառաւ ստիպուած են այս աւար նասին բացակայ գտնուել, և զրով յայտնած են իրենց բացակայութիւնը, բայց ի վերջինսն, որոց և ո՛չ խի գիր գրելու կարողութիւնն ունեցած ըլլալն խնայուած է: Հետեւապէս անոնց բացակայութեան պատճառն արձանագրել տուաւ ներկայութեան առմարին մէջ:

Յ.

Հրամարական

Ատենապետ փաշան՝ Ատանայի վիճակին երեսփոխան Նորատուհնեան Սիմոն կնիքնորէն անձնական տիրութեանը պատճառաւ հրաժարողիւ եկած ըլլալը յայտնելով կարգաց յատենի, և տեսնելով որ երեսփոխաններէն զխտուութիւն ընող չկայ, իրրեւ պարզ հրաժարական քուէի դրաւ, զոր միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆԵՑ Ժողովը:

Զ.

Քոչորացիք երեսփոխանաց ունեց.

Ատենապետ փաշան՝ քանի մի երեսփոխաններէ ստորագրեալ բողոքացիք մը մատուցուած ըլլալը ծանուցանելով, Ժողովին ներկայացոյց զայն, որ կարգացուեցաւ, և ահաւասիկ:

Վ. սեմախայ Ատենապետ Ա. զգային ժողովոյ

Ժողովոյս տասներորդ նիստին՝ բողոք մը տուինք Երզնկայու առաջնորդ Ալեքսիսեան Ղրիգոր վարդապետի Եպիսկոպոսանուան գէմ, զոր Ժողովն Վարչութեան յոնց բացատրութիւն ուղեւու համար, արդ՝ տեսնելով որ մինչև ցայսօր տակախն Վարչութիւնը իր լուսութիւնը կը շարունակէ, այսօր նոյն բողոքը կը կրկնուի:

24 Հոկտեմ. 1875

Ս. Գ. Պէշիրեան Յակոբ Իւրիճեան
Յ. Կ. Ելմեհեճեան

Էւ ես ոչ ինչպէս նախապէս պիտի ևս առաջնորդութեան մասին ևս կը բողոքեմ:

24 Հոկտ. 1875

Ք. Ղազարոսեան

Էւ ես կը ձայնակցիմ.

Պ. Պատեանեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը տեսնէք որ նասիրդ բողոքի մը կրկնութիւնն է այս. եթէ Ժողովը կուզէ լսել բողոքին կրկնութիւնը, պէտք է նորէն յղել Վարչութեան. ուստի այս յղման համար Ժողովին կամըը պիտի հարցնեմ:

Զայս ըսելով Ատենապետ փաշան քուէի գրաւ, և Ժողովն 3 քուէի ղէմ մեծամասնութեամբ ՈՐՈՇԵՑ Վարչութեան յղել:

Ծ.

Նստակ Սրբազան Պատրիարք Հօր.

Ատենապետ փաշան՝ Սրբազան Պատրիարք Հօր զրկած մէկ նամակը ներկայացուց Ժողովին, որ կարգացուեցաւ, և ահաւասիկ:

Վ. սեմախայ Ատենապետ
Ա. զգային Ընդհանուր ժողովոյն

Անձնական վերահաս տիրութեանս պատճառաւ, ալ այսուհետև անկարելի է որ պատշաճապէս պատրիարքական պաշտօն վարեմ. ուստի կաղաչեմ որ այս վերջին հրաժարական ընդունելով՝ ազատ համարէք զիս պատրիարքութենէս:

Զեր այս շնորհքը անկշռելի բարեբարութիւն մը համարելով, միամ շնորհապարտ և աղօթարար

1875 Հոկտեմ. 24

ՆՐՄԵՍ ԵԳԻՍՊՈՊ

Խապիւղ

ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սոյն նամակը հիմա այս վայրկեանիս մէջ հասաւ ձեռքս, և կը տեսնէ Ժողովն՝ որ ցաւալի գոյժ մը կը հաղորդէ մեզ Սրբազան Պատրիարքին, այն է իւր հրաժարականը: Ժողովին կը մնայ այս մասին խորհիլ. ուստի կը հրաւիրեմ խօսք ուղղեցեք կարգաւ խօսիլ:

ՊԱՍՄԱՃԵԱՆ Ս. ԷՑ. — Այս՝ այնպիսի մեծ խնդիր մ'է, որոյ վրայ առանց կանխաւ պատրաստուելու կարող չենք կարծիք մը յայտնել, ուստի կառաջարկեմ որ օրակարգն անցնի այս անակնկալ խնդրի՝ յաջորդ նստին նկատուութեան առնելու համար:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ. — Նոյնպէս կառաջարկեմ:

ԱՍԼԱՆԵԱՆ Մ. ԷՑ. — Էս կառաջարկեմ որ Ժողովս իւր կողմէ քանի մը պատգամաւոր ընտրէ՝ զրկել Նորին Սրբազնութեան հրաժարականին ստոյգ պատճառն խնամաւ համար:

ԱՂԱՏԷԿԵԱՆ Յ. ԷՑ. — Ի լրոյ գիտեմ որ Սրբազան Պատրիարքը չէ թէ կամաւ, այլ վատառողջութեան հարկէն ստիպեալ կը հրաժարի. ըստ իս՝ Տեղապահ մը դնելով իւր պաշտօնը թեթեւցնելու հոգ տանելու է:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՑ. — Կարծեմ թէ բողոք ընկերակցաց զգացմունքը պիտի թարգմանեմ ըսելով որ ոչ ոք կընդունի Նորին Սրբազնութեան հրաժարականը. թէ որ պատճառ մը կայ և այն ալ իւր հիւանդութիւնն է որ կստիպէ զրկել զմեզ իւր պատրիարքութենէն, պէտք է այս մասին Ժողովս կանխաւ բանակցի Նորին Սրբազնութեան հետ և յետոյ ըստ պատշաճին որոշում մը ընէ. իսկ այս հրաժարականն սկզբամբ անընդունելի է մեզի համար:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ. — Էս ալ հետեւելով Նուրեան էֆէնտիին կը կրկնեմ նորա առաջարկութիւնը թէ անգամ մը Նորին Սրբազնութեան հետ խօսուի և ստոյգն իրմէն խնայուի: Իսկ այս բանակցութեան համար ամենէն յորմարն՝ Ատենապետ փաշան, ձեր Վ. սեմութիւնն է, որ թէ իրրեւ բժիշկ և թէ իրրեւ Ատենապետ ժողովոյս՝ Նորին Սրբազնութեան հետ խօսելով կրնայ քննել և հասկնալ իւր վիճակը:

ՄԵԼԻՔԵԱՆ Մ. ԷՑ. — Սրբազան Պատրիարքին հրաժարական տալն արդարեւ ցաւալի է. սակայն եթէ ստոյգ է որ Նորին Սրբազնութեան հիւանդութիւնն է պատճառ այս հրաժարման, Ժողովս ըստ կրնէ կանխաւ բանակցիլ Նորին Սրբազնութեան հետ. և եթէ համոզուի թէ իրօք իւր հիւանդութիւնն այնչափ ծանր է որ անկարելի կընէ իւր պաշտօնը վարել, այն տոնն կրնայ պատրիարքական տեղապահ կամ խորհրդական մը ընտրելու կէտը խնդրոյ նիւթ ընել և որոշում մը տալ այս մասին:

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ. ԷՑ. — Ս. Պատրիարքին նամակն՝ իրրեւ հրաժարագիր՝ պէտք է նախ՝ ինչպէս օրինաւորութիւնը կը պահանջէ, քուէի գրուի, ընդունուիլը կամ չընդունուիլը յայտնուի, և յետոյ անոր համեմատ տնօրէնութեան ըլլայ:


ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ստիպելով եղած խօսքերը կը տեսնեմ նախ՝ որ Ժողովն ընդհանրապէս ցաւ և կակիծ կը յայտնէ Սրբազան Պատրիարքին հրաժարիլ ուղեւուն համար. տարակցոյ չկայ թէ այս զգացումն ընդհանուր է, և ամեն ոք կը փափաքի՝ նաև կը մտախօսէ որ Նորին Սրբազնութիւնն ընդ փոյթ ասորիւնութիւն գրտնելով կարող ըլլայ իւր պաշտօնը շարունակել: Երկրորդ՝ կը տեսնեմ որ անմիջապէս դարմանն առաջարկելու համարձակող չկայ. այլ փափաք կը յայտնուի նախապէս իրմէն հասկնալ թէ իրօք հիւանդութիւնն է պատճառ իւր հրաժարման թէ ո՛չ ուրիշ պատճառ մ'ալ կայ, և ասիկա ստուգուելն ետեւ դարմանը մտածել կառաջարկուի. միանգամայն Ժողովը հիմակուրնէ հասկըցնել կուզէ որ եթէ Սրբազանին հիւանդութիւնն՝ Աստուած չընէ՝ անբուժելի ալ ըլլայ, հրաժարականը դարձեալ չընդունուի, այլ զնա միւտ Ազգին Պատրիարք պահելով գործերը յանուն Նորին տեսնել տալու փափաք կը յայտնէ: Էս կը փաթեմ ըսել յայտնապէս Ժողովին թէ ըստ իմ կարծեաց, Սրբազան Պատրիարքին ոչ գործի մը պատճառաւ, ոչ անհամաձայնութեան և ոչ բողոքականութեան նկատմամբ կը հրաժարի պաշտօնէն, այլ միմիայն իւր հիւանդութեանը պատճառաւ. այսպէս ըլլալը հաստատ գիտեմ ես. նոյնպէս իւր հիւանդութեան անբուժելի չըլլալն ալ գիտեմ: Ուստի միթէ տեղի ազկ չըլլա՞ր որ Ժողովս իւր միջէն մէկ եկեղեցական և մէկ աշխարհական պատգամաւոր ընտրելով՝ անոնց յանձնէ երթալ Նորին Սրբազնութեան՝ ժողովոյս զգացած ցաւը՝ կակիծը և ունեցած սէրըն ու փափաքը յայտնել, և ըսել որ Ժողովը պատրաստ է իւր պաշտօնավարութիւնը զիւրաքընելու համար պէտք եղած ամեն միջոց խորհիլ և տնօրինել, միայն թէ իւր հրաժարականն ետ առնուլ բարեհաճի:

ՌԱԶՄԱԹԻՒ ԶԱՅՆԵՐ. — Ս. յո՛ւ, շատ ազկ կըլլայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն ընտրեցէք պատգամաւոր զրկուելիք անձերն՝ որ երթան Սրբազան Պատրիարքին խօսիլ իմ ըսած կերպովս և միմիարեն զինքն:

Ատենապետ փառային ստաճարիտիւնը քուէի գրուելով՝ միսմայն ընդունուեցաւ ժողովն, և պատգամաւոր ընտրուեցան՝

Տ. Մատթէոս փարպապետ
Ասեփան փառային՝ Ատենապետ



ՕՐԱԿԱՐԳ

Ա

Պատասխանի Քաղաքական ժողովն՝ Պէշիբեկեան Լ. Էֆենտիի հարցման համար :

Ատենապետ փառային ժողովին ներկայացուց Պէշիբեկեան Էֆենտիի հարցման համար Քաղաքական ժողովին եկած պատասխանագիրն, որ կարգացուեցաւ, և ահաւասիկ .

Ատենապետ փառային

Ազգային Երեսօրհանական ժողովոյ

Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովն տեղեկացաւ Մայր դիւանից թիւ 119 սրաչտօնագրին թէ ազգային երեսօրհան Պէշիբեկեան Էֆենտիին դո՛ւ չըլլալով իւր առաջին հարցապնդման Վարչութեան կողմէն արուած պատասխանէն, կրկնե՛ր է իւր հարցապնդումը, և ազգային ժողովն որոշե՛ր է լսել Քաղաքական ժողովին նոյն հարցապնդման պատասխանը :

Քաղաքական ժողովն նկատելով որ նոյն հարցապնդումը կծու, թշնամական և բեմական լեզուի անվայել ոճով մը ներկայացուած է ազգային ժողովին, մեծապէս կը ցաւի չէ թէ հարցապնդող երեսօրհան Էֆենտիին այս ընթացքին դէմ, այլ ազգային ժողովին՝ առանց նոյն հարցման թշնամական լեզուն իւր քուէովը դատաստարտելու նկատողութեան աններուն և Քաղաքական ժողովն պատասխանը լսել ուղեւուն համար :

Հետեւաբար Քաղաքական ժողովոյս այս օրուան նստին ներկայ գտնուող ութ անդամներէն ի բաց առեալ Արապեան Մարգիս և Խնդիրեան Ստեփան Էֆենտիները, մնացեալքս չը կրնայով հանդուրժել իրաց այս վիճակին, կը պարտաւորի՛ր ներկայիս մեր հրաժարականը

ճառուցանել Ազգային պատկառելի ժողովոյ :
24 Հոկտեմբեր 1875 (Ստորագրութիւնը)

ԿԱՐԱՊԵՏ Գ. ՓԱՓԱՉԵՆ
ՄԻՔԱՅԷԼ ՄԱՄԿՈՆԵԱՆ
ՄԿՐՏԷՂ ԷՍԵԱՆ
ՌԱԶԱՏՈՐ ԱԼԵԱՆԱՊԵԱՆ
ՍԱԳՆՍ ՍԱՐԱԼԱՄԵԱՆ
ՍՄՐԱՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Վասն Յարութիւն Լ.Ք. Գոսխանճեանի
կարապետ Գ. Փախաղեան

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը տեսնէ՛ր որ երեսօրհանական հարցապնդումը վարչական տաղնուց մը յարոյց մեր առջև՝ Քաղաքական ժողովոյ հրաժարման պատճառ տարով. բայց ցաւալի է որ Քաղաքական ժողովը փոխանակ հարցման առարկայ եղող բուն խնդրովը զբաղելու՝ ձեռքը ժամանակ անցուցեր է, և տեղի ցաւային այն է որ այն տաղնուց Քաղաքական ժողովին, Գիւտնիս կողմէն սա զիրն ուղղուելն ետրը տեղի կանենայ. ահա ազգային ժողովոյ կողմէն մեր գրած գիրը կարդամ, որպէս զի հասկնար թէ ժողովին փախուրած կերպովը զրուած է թէ ո՛չ : (և Ատենապետ փառային կարգացուեցաւ)

Գիւտնիս
Ազգային ժողովոյ
Թիւ 119

Ատենապետիւ Սրբազան Պատրիարք Հայր-Ազգային ժողովոյ ամսոյս 10 ին դումարուած նստին մէջ՝ Պէշիբեկեան Էֆենտի երեսօրհանին կողմէ սա հարցումը ներկայացաւ :

« Իրա՞ւ է որ կրտսի թէ Քաղաքական ժողովը պլուտնէն գործադրութեան դրեր, Պատրիարքացանի մէջ մի քանի սրտառնեաներ աւելցուցեր և այս վերջնոց տարեկան քսան հար դուրուչ ծախսոց գումար մը յատկացուցեր է » :

« Գործնաւ ստո՞յգ է այն թէ Պատրիարքարանի ծախսն իւրաքանչիւր ամիս բանալով՝ ցարդ տրուէն ութսուն հար դուրուչի շախտարք է դոյսցեր » :

Թէ՛սլետե ասկէ առաջ գրեթէ միևնոյն իմաստով նոյն երեսօրհանին կողմէն եղած

հարցման՝ Ազգային ժողովոյ հրաւիրին վրայ՝ Վարչութիւնը գրով պատասխանած էր թէ՛ « առայժմ՝ ճանաչողութեամբ պատասխանելը պատեհութիւն չը համարելով՝ արժան կը դատէ որչա՞ր եղած տեղեկութիւններն իւր համարատուութեան ժամուն լիալի տալ » :

Սակայն այս անգամ միևնոյն երեսօրհանի կողմէն խորհրդածութիւն ըլլալով թէ՛ « հարցումը յարարական գործոց կամ նուրբ քաղաքաշխտական խնդրոց վերաբերեալ չըլլալով՝ պատասխանն երկարաձուգելու հարկ չկայ » : Ժողովը նկատողութեան առաւ հարցապնդումն, առանց հաւանութիւն տարու հարցանող երեսօրհանին գործածած ոճոյն և բառերուն, որոց անպատշաճութիւնը զիւտնիս կողմէ յատենի անդ հրատարակեցաւ. և որոշեց հարցապնդման պատասխանը Վարչութեան պաշտօնապէս լսել առաջիկոց նստին՝ որ սխալ գումարի հոխուժբեր 24 ի ուրբաթ օրն :

Խնդրելով՝ Սրբազան Հայր, որ շնորհ ընէ՛ր այն որոշումը հաղորդել Քաղաքական ժողովին, որպէս զի պատրաստ ըլլայ Ազգային ժողովին որոշման պատասխանել իւր արժան դատած կերպով, մնա՛մք ամենայն խոնարհութեամբ :

13 Հոկտեմբեր 1875
Ատենապետ՝ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ
Ատենապետի՛ւ Ն. Ս. ԱՂԱՍՏԵԱՆ

(Ատենապետ փառային շարունակելով) Աւասիկ Գիւտնիս այս նամակաւ ժողովին զգացման թարգմանն եղած էր՝ նոյն օրը յատենի աստ հարցման ոճոյն անպատշաճութեան վրայ խօսուածներն՝ որ տեսակ մը յանդիմանութիւն էին հարցանողին, հաղորդելով Քաղաքական ժողովոյն : Կը ցաւիմ որ Քաղաքական ժողովը փոխանակ ընդ այս դո՛ւ ըլլալու և Ազգային ժողովոյ որոշման սահմանադրապէս պատասխան տարու՝ դարձեալ ձեռքն զրաղած է : Ուստի ժողովին կը մնայ իւր կարծիքը յայտնել այս մասին : Խօսք ուղղուելը կը հրաւիրեմ կարգաւ խօսիլ :

ԱՍԼԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ինչ որ գրած է ժողովոյս դիւանն, անոր պատասխան չէ այդ եկած նամակը :

ՀՈՎՈՒՅԱՆ Ղ. ԷՖ. — Քաղաքական ժողովը զուցէ ուրիշ պատճառ մը ունենալով հրաժարման, սախ պատճառ բունած է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Չենք զխտեր ուրիշ պատճառը, բայց հարցման կծու ոճը պատճառ բունած է այսօր :

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Քաղաքական ժողովոյ պատասխանն այնքան անհամաձայն կը թուի ինձ Գիւտնիս կողմէ դոյսած պաշտօնադրոյն որ բացատրութեան սկզբ կզգամ : Մինչդեռ Գիւտնիս գրած է Քաղաքական ժողովոյ թէ « հարցման ձեւին ու ոճոյն անպատշաճութիւնը յատենի ժողովոյ հրատարակեցաւ, Քաղաքական ժողովը կը պատասխանէ թէ « ըստ որում՝ ժողովը չը դատաստարտեց այդ հարցման ձեւն ու ոճը, փոխանակ պատասխանելու կը հրաժարիմ » : Հարկ է զիտնալ ինչ կերպով նկատողութեան առեր են այդ պաշտօնագիրը՝ հրաժարող ժողովականք, որոց համամիտ շէն եղեր Արապեան և Խնդիրեան Էֆենտիք : Ուստի լաւ կըլլայ կարծեմ որ յիշեալ Էֆենտիք, որ հոս ներկայ են, բարեհաճին բացատրութիւն տալ մեզ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն կը խնդրենք Միքայէլեան Էֆենտիին, որ իրրև Քաղաքական ժողովոյ զիրն ստորագրողներէն մին՝ բարեհաճի բացատրել թէ ի՞նչ ըսել կուզեն՝ չենք կրնար հանդուրժել » ըսելով :

ՄԻՔԱՍԵՒԼԵԱՆ Ս. ԷՖ. — Ոչ թէ ստորագրողաց ամենուն կողմէ, այլ միայն իմ կողմէս կը յայտնեմ որ ըստ որում խնդիրը դրամական էր, և այս խնդրոյն մէջ մեծ վստահութիւն ունի Ազգային ժողովը Վարչութեան վերայ, քանի որ այս Վարչութիւնն է որ ջանաց ազգային օրտարքը ջնջելու, միթէ կրնայ դարձեալ ազգը պարտքի տակ ձգել : Քաղաքական ժողովն առաջին հարցման պատասխանած էր թէ իւր համարատուութեան ժամուն սկզբ եղած տեղեկութիւնները լիալի սխալի տայ. և այս ալ երկար ժամանակի կարօտ չէր, քանի մը ամիսէն սխալ ըլլար : Եթէ կըստի թէ ազգային անաուկը մինչև հիմա մեծ գումարներ սարստական եղած է, սխալ է այդ. ազգային անաուկն առ երկուց թոյց մ'ունի, բայց սարստական չէ, փոխարէն պահանջներ ունի որ դանձուելով զի-

բար կը դոցեն, և եթէ պահանջներն ամբողջապէս գտնուին, բայց գոյութիւնն ետև գումար մ'ալ կուեզնայ: Ահա սա նկատմամբ համարատուութեան պահանջն ձգած էինք մեր պատասխանը, սակայն հարցումը կրկնուեցաւ, և Քաղաքական ժողովը չուզեց պատասխանը տալ, որովհետև հարցման ձևը կծու էր, և գոհ չեղաւ կրկին հարցումը ըլլալէն, որովհետև իւր դրոյ անվտանգութիւն յայտնել ըսել էր: Հետևապէս Քաղաքական ժողովը անդամներէն բազումք որոշեցին հրաժարիլ, որոց մէկն ալ ես եմ:

ՊԱՍՄԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Պէշիրեան էֆէնտիի կողմէ տուածին անգամ եղած հարցման՝ Արշաթիւներ պատասխանելով յայտարարած էր թէ իւր համարատուութեան պահանջն պէտք եղած տեղեկութիւնը պիտի տայ. նախ՝ պէտք է սոսկ կէտը նկատողութեան առնուլ թէ Արշաթիւնն երբ հարցման մը պատասխանն իւր համարատուութեան ժամանակին կը վերադառնայ, իրաւունք ունի՞ թէ ոչ: Բոլոր քաղաքական օրէնքները միահաղոյն կը հաստատեն թէ որ և է վարչութիւն մը օրինական պայմանաժամուն իւր պատասխանատուութեան պարտքը կը կատարէ. ուստի իմ կործակումը Քաղաքական ժողովը այն տուած պատասխանն ըստ ամենայնի օրինաց համաձայն է: Պէշիրեան էֆէնտիի կրկին հարցման մէջ գործածուած լեզուն տախտիք բռնելով Քաղաքական ժողովն այսպիսի պատասխան մը դադն առաջնայն օրինակաբար է հերքուած չըլլալէն յառաջ եկած է. վստահ զի Արշաթիւն մը երբ երեւոյթանական ժողովը համարումն ու վստահութիւնը գրաւելով պաշտօնի կը կոչուի, պէտք է ազատորէն գործէ մինչև այն օրը՝ յորում օրինակաբար պարտաւոր է իւր գործոց համարը տալ. իսկ թէ որ սասոր հակառակ ամեն ժամանակ պատասխանատուութեան ենթարկուի, ըսել է թէ նա արդէն գործելու ազատութիւն չունի և սահմանադրապէս պատասխանատու չէ: Այս տեսութեամբ Քաղաքական ժողովը նախորդ պատասխանն օրով կը խոստանոր իւր պայմանաժամուն լիութի համարատու լինիլ, ըստ ամենայնի օրինաց համաձայն կը գրտնեմ: Պարզ Քաղաքական ժողովը հրաժարա-

կանի խնդրոյն, չեմ կրնար ըմբռնել այս կէտը, մանաւանդ ցուօք որտի կըսեմ որ այնպիսի որ մը՝ յորում մեր Ամենապատիւ Սրբազան Պատրիարքն իւր հիւանդութիւնն իրրև բանաւոր պատճառ մէջ բերելով կը հրաժարի, Քաղաքական ժողովն ալ հրաժարականի խնդիր կը հանէ. մինչդեռ Արշաթիւն անդամներէն իրենց ձրի պաշտօնավարութեան և գործոց մէջ կը դժգոհինք, հիմա մարդ չունինք, ոչ նախագահ կայ և ոչ ժողովական. ցաւով կէտի մը հասած ենք: Ես իմ կործակումը բացայայտ ըսեմ. քանի որ Քաղաքական ժողովը տուած առաջին պատասխանն ըստ ամենայնի օրինաց համաձայն էր, հարցումը կրկնելու և արդելու ամենևին հարկ չկար. բայց ինչ որ է՝ եղած է: Այժմ կը մընայ որոշել նախապէս թէ Քաղաքական ժողովը հրաժարականն ընդունելի՞ է, թէ ոչ:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Պատմական էֆէնտիի խօսքին մէջ ճշգրտութիւն կայ, բայց ճշգրտութիւն մ'ալ կը գտնուի: Ըստ թէ այն մարմինն որ սահմանադրապէս պատասխանատու է, պէտք է ազատ մնայ իւր գործողութեանց մէջ մինչև սահմանադրեալ պայմանաժամը. ապա թէ ոչ՝ սահմանադրապէս պատասխանատու չըլլալ: Իրաւ է թէ սահմանադրական վարչութեան մէջ երբ պաշտօնական մարմնաց կամ անձի մը գործողութիւն իշխանութիւն կը յանձնուի, պէտք է որ գործելու ազատութիւն՝ բայց սահմանափակ ազատութիւն մ'ալ տրուի անոր: Այն խնդիրն բուն մէջ՝ ուր քաղաքական նկատումներ կան և որոնցմէ կրնան վրաս ծագիլ, Երևոյթանական ժողովը քաղաքական դատարաններով պէտք չէ միջամտել և խնդիրը ձգելու է այն կէտին մէջ՝ ուր որ է: Սակայն դրամական խնդիրներու մէջ այնպէս չէ. այլ իրաւունք ունի գործադիր իշխանութեան հարցում ուղղելով տեղեկութիւն ուղել, և գործադիր իշխանութեան ալ պարտքն է գոհացուցիչ պատասխան տալ, միայն թէ երբք քաղաքական նկատմամբ վրաս կամ անտեղութիւն մը նշմարէ իւր տալիք պատասխանին մէջ, այն ատեն կրնայ զայն առկախել: Արդ՝ կը հարցնեմ, ի՞նչ վրաս կամ անտեղութիւն կար Պէշիրեան էֆէնտիի հարցման մասին տալիք պատասխանին մէջ, մանաւանդ

երբ Ժողովն նոյն հարցման վերաբերիչ լեզուն դուրս հանելով՝ այս կէտին ալ գոհացուցիչ ձև մը տուած էր, անտարակոյս չկար և ոչ մի փոքր վրաս կամ անտեղութիւն: Ուստի Քաղաքական ժողովը այս ընթացքն ուրիշ բան չէ, բայց եթէ Արշաթիւն ժողովը մէկ մեծ իրաւունքը զրնուլ, և կարծեմ թէ ստանկ պարագայի մը մէջ հրաժարելու բնաւ տեղի չկայ:

ԲԱՆԻ ՄԸ ԶԱՅՆԵՐ. — Կը ձայնակցինք Երևան էֆէնտիին:

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս. ԷՖ. — Երևան էֆէնտին կըսէ որ դրամական խնդրոց մէջ շարտասխանելով աղէկ չըբաւ Քաղաքական ժողովը. բայց ես կըսեմ որ Քաղաքական ժողովն արդէն իւր պիւտոնն զրկելով պատասխանած էր և նորէն հարցում ուղղելու հարկ չէր մնացած: Պիւտոնն մէջ նախորդ երկու տարուան հաշիւներն ալ դրուած են. 74 տարւոցն երկուտից հաշուին մէջ 29 հազար դուրու ըստ մը կերևնայ, այսինքն՝ ծախքը մուտքէն շատ է, և սոսիս իրական չէ, առ երևոյթ է. վստահ զի նոյն տարուան կեդրոնական տարբը՝ որ 2 հարիւր հազար դուրու զիտի հասնէր, հաւարման դանդաղութեամբ մը 160 հազարի շուրջ դուրու մը հասած է, և սոսիս վանդառութիւնը հարկու էլեմտից հոգաբարձութեան կողմէն եղած է. իսկ ներկային մէջ պիւտոնն այնպիսի կորզողութեամբ մը շնորհած է որ հաւաքից կողմը դըրուած գումարները գանձուածներն են և ոչ թէ գանձուելիքը նշանակուած: Հետևապէս ոչ զայնպիսիքը պատճառ մնացած էր, և ոչ կարողութիւն կար Պէշիրեան էֆէնտիի հարցման: **ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ.** — Արշաթիւն գործոց մէջ նոր մտած ըլլալուս համար գուցէ կարող չըլլամ խնդրոյն վրայ Միքայէլեան էֆէնտիի յառաջ բերած գործնական պարագայից պատասխանել, ես խնդրոյն գործնական մասը կը ձգեմ, միայն սկզբունք վրայ կը խօսիմ: Պահ մը ստուջ հարցուցի թէ ի՞նչ վտանգ կար Քաղաքական ժողովը ստալիք պատասխանին մէջ. ի՞նչ վրայէլեան էֆէնտիի խօսքերէն կը հասկնամ որ վտանգ մը չկայ եղեր. թո՛ղ այդ բացատրութիւնները՝ զոր հիմա Միքայէլեան էֆէնտին տուաւ, Քաղաքական ժողովն ինք տուր, և բաւական էր մեզ-

իսկ թէ որ իւր տալիք պատասխանն ազդային շահոց նկատմամբ վրաստակար կամ վտանգաւոր կը դատէր, թո՛ղ այդ ըսէր մեզ. մեր ալ ազդային շահոց նկատմամբ վրաստակար կը ըսենք և կարտենք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Քիչ մ'ուշ հասնելով՝ հիմա տեղեկացայ որ Քաղաքական ժողովը անդամներէն 7 ը հրաժարական տուած են: Արշաթիւն անդամ եղող անձի մը համար եթէ ամենադիւրին բան մը կայ՝ այս է. նեղը մանկուն պէս հրաժարականը կատարողէ և դունէն դուրս կելնէ: Մենք կը յուսայինք որ Քաղաքական ժողովը դրամական պարագայի մը վերաբերեալ ներկայ հարցման խնդրոց մէջ փոխանակ հրաժարագրով ներկայանալու, այն բացարձակներով պիտի ներկայանայ՝ օրով ներկայացաւ Միքայէլեան Սիմոն էֆէնտին. ի՞նչ ըսաւ Միքայէլեան էֆէնտին. ըսաւ թէ՛ «ներկայ Արշաթիւնը մինչդեռ հին սրբաբերը ջնջելու ետեւէ եղաւ, միթէ կրնայ նոր սրբաբեր ընել, և թէ սնտուկը բաց պիտի ունենայ թէ ոչ, տարեկանն յայտնի կըլլայ». պատասխանը համարատուութեան ժամուն կը թողում ըսելը սրբաբեր չպիտի թողում ըսել է: Այժմ այսպէս ըսուած ըլլալով, խնդիր չէր մնար. ինչպիսիս արդէն պիտի միջոցառութեան սկիզբուած ըլլալուն կամ չըլլալուն վրայք էր. կը հարցնեմ թէ կը գործադրուի՞ կոր: (Միքայէլեան Ս. էֆէնտին միջամտեալ կերպով. — ոչ): Որքան կարողեմ, ետ առէր հրաժարականն ինչ լեզուի ոճը նախորդ նախն մէջ անպատշաճ դատուեցաւ և ալ խնդիր չմնաց: Կարծեմ թէ Ժողովը գոհ եղաւ Միքայէլեան էֆէնտիի բացարձակները ըսելով. ուստի ես կրտաջարկեմ որ սոսիս տրուած բացատրութիւնները բաւական համարելով Ժողովը՝ գուցէ այս խնդիրը:

Ստակի խնդրոյն մէջ Ժողովն իրաւունք ունի միշտ հարցում ըսել Արշաթիւնն, այս իրաւունքը հաստատուն պէտք է բունուի. առաջին անգամն է որ Ժողովը ճամբայ ելաւ այս խնդրոցն մէջ. մինչև իսկ ստակին գործածութեան եղանակն ալ Ժողովն ինք պէտք է որոշէ և դիտնայ ազդային է՛ն բարձր պաշտօնեացէն մինչև յետինին տրուելիք գումարներն և ըլլալիք գումարան ծախքերը:

ԻՆՏԻՆՏԵԱՆ Յ. ԷՖ. — Միրայէլեան է. Ֆէնտին կրտէ թէ պիտոճէն չդործադրուիր. բայց սո՛ւտ է. սխառած է գործադրուիլ: Ես շատ ազնկ գիտեմ որ այս տարի խղճային անասկը 150 հազար զուրուչ սարսք պիտի ունենայ:

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս. ԷՖ. — Շատ սխալ է այդ ըստդ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բաւական խօսուեցաւ այս նիւթին վրայ, բայց եզրակացութեան վեր չհասանք: Ստույգ է որ Աղգային ժողովոյ կողմէն նոր կտիւն հարցապնդումներ տեղի ունենալ. Սահմանադրութիւնն ընդունած չէր այս գրութիւնը, և չէր տուած ազգային ժողովոյ արտօնութիւն հարցումներ ընկեր առ Վարչութիւնն որ և է խնդրոյ համար. Սահմանադրութեան համեմատ Աղգային ժողովոյ սպորտական սրտածոն էր տարին միանգամ նիստ ընել, Վարչութեան համարատուութիւնը ընել և նոր Վարչութիւնը կազմելէ ետեւ ձգել երթալ. խի յարատեւ նիստեր ընելու և Վարչութեան վրայ արթնութեամբ հսկելու գրութիւնը չունէր ասիլ յատաջ: Ուստի չէր կարող, սրտահոգութիւն չունէր հարցապնդում ընելու. սակայն սահմանադրութիւնը վերաբնութեան ենթարկուելէ ի վեր քանի մը փոփոխութիւններ ընդունած է, որոց մէջ մեծ տեղ մը կը բռնէ նոր հաստատուած ներքին կանոնադրութիւնը իր մէկ քանի արտահարութիւններով, և մասնաւորապէս Աղգային ժողովոյ խորհրդարանական ձև տալովն և հետեւաբար հարցման գրութիւնն հաստատելով: Սոյն գրութեան առաջին քայլին մէջ՝ հարցում ընելու և սրտատխանելու խորհրդարանական եղանակները գիտնալ զժուար բան է է մեզի պէս արեւելեան ազգի մը համար: Ըստ իս՝ ներքին են թէ՛ անսխառած ձևով եղած այս հարցումն և թէ՛ անոր գէ՛մ Վարչութեանն եկած այս սրտատխանը. վասն զի այս ամենը մեր նորուս ըլլալուն արդիւնքն են: Սակայն պէտք է գիտնալ և ըմբռնել սա՛ կէտը թէ՛ ինչպէս Նաբեան էֆէնտին ալ ըսաւ, ամեն սահմանադրական Վարչութեան մէջ ալ կայ այս հարցման գրութիւնը. երեսփոխանութեան կողմէ այս կամ այն խնդրոյ համար հարցում կրնայ ըլլալ առ Վարչութիւնն, սոցպէս մեր երեսփո-

խանութիւնն ալ հարցումներ կրնայ և պէտք է ընել, միայն թէ ըստ սրում մեր վարչական մարմինը ձրիտար կաշխատի, պէտք է իրատ փոփոխութեամբ վարուիլ անոր հետ: Այսու հանդերձ եթէ ևս Վարչութեան անդամ ըլլայի հիմա, շատ դո՛ւ հրապարակ հարցապնդման գրութեանն վասն զի մէկ կողմէն ձրի աշխատիլ և ամեն բան զո՛հել և միւս կողմէն պէտք եղած ատեն զոլ սրտատխանումն լինի՛ մեծ ծառայութիւն մը և մեծ զոհողութիւն մըն է. ուստի և մեծ վարձք ու փառք կը բերէ անձնուէր սրտածոնա կալոյ: Ես կը տեսնեմ որ թիւրիմացութիւններ տեղի գտած են այս ներկայ խնդրոյն մէջ. նախ՝ վասն զի երբ առաջին անգամ Պէշիբեան էֆէնտին պիտոճէին գործադրութեան գրութիւնն ստո՛յգ է թէ չէ՛ հարցում ըրաւ, սա՛ր սրտատխանը զրոնալու հարցում մը չէր, և միայն այս՛ կամ ս՛չ ըսելը կը բաւէր. թերևս կարծուի որ Վարչութիւնը պիտոճէն նախ քան գիտակրայումն գործադրութեան գրած ըլլալուն համար, չէր կրնար սրտատխանել «ոչ», վասն զի ստե՛լ էր չէ՛ր կրնար նաև սրտատխանել «այո՛» վասն զի իր սրտատխանը սրտատխանել էր. ստոր համար սրտատխանը տարեգլխին ձգելու եղանակն ընդունել էր. բայց ես ձեզ կը հուսատեմ թէ Վարչութիւնն իրաւունք ունի պիտոճէն չփառնուած ալ գործադրելու, երբ իր ձեռքը վաւերացեալ պիտոճէ մը չկայ ոչ անցեալ տարուրնէ, և ոչ նոր տարւոյն համար. ուստի կրնայ իր առաջարկած պիտոճէն գործադրել, վաւերացումն կողք վաւերացեալը անոր տեղ ընդունելու, և անցելոյն համար Պէշիբեան էֆէնտին (փոխարինութեան քուէ) մը Աղգային ժողովն խնդրելու սրայմանաւ: Մերձ Վարչութեան այս «այո՛ն» կամ «ոչ» զրանալն այժմ խնդիր մը եղած է. երկրորդ թիւրիմացութիւնն ալ սա է որ ետքի հարցման մէջ թէ և քանի մը կծու բուներ գործածուած էին, բայց որովհետև Աղգային ժողովը ընդունեց առաջին սրտատխանը, և հարցումը նորոգուած ատեն նորին ուղեց սրտատխանը ընել, այս կը ցուցնէ թէ Աղգային ժողովն հարցման ձևին չէ, այլ բուն խնդրոյն հետ կը զբաղի. և սակայն յատենի ժողովոյ Պիւսանը հարցանովին կծու ընդուն անսխառակս

եղերեց, և Ժողովին սրտածոնը Քաղաքական ժողովոյ հաղորդած միջոցին, հարցման ձևին վրայ Աղգային ժողովին հո՛ւ և հաւան չըլլալն յայտնելու զանցատուութիւն չըրաւ: Ուստի Քաղաքական ժողովը արդէն խի սրտատխանելու լեզուի մը սրտածոնա իր սրտածոնէն հրածեշտ տալու իրաւունք չունի: Կերևի թէ Քաղաքական ժողովը կտարածելով՝ որպէս թէ Աղգային ժողովն այն կծու հարցումն ընդունելով և անոր սրտատխանն ուղեւորը յարձակողական դեր մը տուած ըլլայ, թիւրիմացութեամբ եւեր հրաժարական տուեր է: Ինչպէ՛ս ըսի, սրտատխանութիւն րիմացութիւն են ասոնք, որիչ բան չեն. ևս եղածներուն մէջ անհանդուրժելի բան ալ չեմ տեսներ. մեր կատարելապէս վստահ ենք Վարչութեան անդամոց ազգասիրական զգացմանը վրայ. ուստի կողաչեմ որ եզրակացութիւն մը յառաջ բերելով գոցենք այս խնդիրը:

ԱՍԼԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Կառաջարկեմ որ Աղգային ժողովը Միրայէլեան էֆէնտին արեւած քայտարութեամբ զս՛ ըլլալով՝ Քաղաքական ժողովոյ հրաժարականը չընդունի և ես անել տայ:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Բայց միւս կողմէ երեսփոխան մը քիչ մը առաջ յայտարարեց թէ ազգային անասկը 150 հազար զուրուչ բայց պիտի ունենայ. ևս գիտեմ և կը հաստատեմ ըսաւ: Այս ի՛նչ պիտի ընենք:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Միրայէլեան էֆէնտին տուած բողոքարութեամբ զս՛ ըլլանք ըսուեցաւ. կընդունի անոր բողոքարութիւնն եթէ Քաղաքական ժողովոյ կողմէ տուած ըլլար. սակայն ինք բաւ թէ յանուն Քաղաքական ժողովոյ չը խօսիր:

Արդ՝ իրր եզրակացութիւն կառաջարկեմ որ Աղգային ժողովը նկատողութեան տանով Քաղաքական ժողովոյ հրաժարականը, և սեւ ներով որ Մայր դիւանին կողմէ գրուած սրտածոնազրոյն մէջ Պէշիբեան էֆէնտին հարցման վիրաւորիչ մասը մեծ խնամով դուրս ձգուած է, այս հրաժարման տեղի չունենալը հաստատէ և ծանուցանէ Քաղաքական ժողովին: Միանգամայն ժողովը Վարչութեան հարցում ուղղելու և անոր սրտատխանին սրտաւերու իրաւունքը գործադրելու համար կառաջարկեմ որ Պէշիբեան

ևսն էֆէնտին ձգելով, նոյն հարցումն իւր կողմէ միայն և յանուն իւր կրկնէ և սրտատխան ուղէ Քաղաքական ժողովն, խնդրելով նաև որ իւր հրաժարականն ետ առնուլ բարեհաճի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նաբեան էֆէնտին առաջարկութիւն մը կընէ, որ երկու մաս կը բաղկանայ. մէյ մը՝ Քաղաքական ժողովոյ հրաժարականը չընդունիլ և ետ առնելու արիւղել. և երկրորդ՝ Պէշիբեան էֆէնտին հարցումը ժողովին խրայնելով, յանուն Ժողովոյ կրկնել և սրտատխանն ուղեւ Քաղաքական ժողովն: — Ուրիչ առաջարկութիւն ընող ալ կա՛յ մի:

ԱՂԱՅԷԿԵԱՆ Յ. ԷՖ. — Քանի որ Քաղաքական ժողովը թիւրիմացութեամբ վիրաւորուելով հրաժարական տալու արիւղած է, հարցումը՝ թէ և յանուն Ժողովոյ՝ կրկնեն ազնկ չըլլար և գուցէ աւելի վիրաւորանելու սրտածոն ըլլայ: Ուստի ևս կառաջարկեմ որ հարցման կրկնութիւնն ետ թողուի:

ՋԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛, այգպէս վարուիլ պէտք է:

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ. ԷՖ. — Կը ձայնակցիմ Աղգայէլեան էֆէնտին:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն առաջարկութիւնն երկուք եղաւ. երկուքին մէջ ալ կայ Քաղաքական ժողովոյ հրաժարականը չընդունիլ և ետ առնել տալ. խի հարցման կէտին գուրով՝ մէկն ի գիտեց Ժողովին կրկնուլը և միւսն ալ նոր հակառակ բողոքովին ետ ձգուիլը կառաջարկէ: — Եթէ ուրիչ խօսք ուղղ չկայ, այս երկու առաջարկութիւնները քուէի կը դնեմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Աղգայէլեան էֆէնտին առաջարկութիւնն ազնկ չբողոքարուեցաւ: Նաբեան էֆէնտին նախորդ հարցումը կրկնել կառաջարկէ. խի Աղգայէլեան էֆէնտին՝ Միրայէլեան էֆէնտին տուած բողոքարութիւնը բաւական համարուի կըսէ: Եթէ այցպէս է, ևս կը ձայնակցիմ այս վերջի առաջարկութեան և կըսեմ թէ Միրայէլեան էֆէնտին տուած բողոքարութիւնը բաւական սրտատխան համարուելով Քաղաքական ժողովոյ հրաժարման մերժումը քուէի դրուի:

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Ես էի ըսողք թէ Միրայէլեան էֆէնտինն տուած բողոքարութիւնը կրնայ ընդունուիլ եթէ յանուն Քաղաքական

ժողովոյ կաւոյ . բայց ինք յանձնէ կը խօսիմ ըսելուն համար առաջարկեցի որ հարցումը նոյն խակ Ժողովի կողմէ կրկնուի առ Քաղաքական ժողովն :

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս . ԷՖ . — Այո՛ , ինչ որ ըսի , ես իմ կողմէս ըսի և չէ թէ հրաժարեալ ընկերակցացս կողմէ ալ միանդատայն : Իմ ըստածս հոս կը յանդի թէ պիտո՞՞ն տուած ենք Ազգային ժողովին , անոր մէջ նշանակուած է ասին բան :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Ուրեմն Քաղաքական ժողովն սրտաւած պատասխանը դեռ ասած չենք ըլլար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Կարծեմ մեր մէջ ալ թիւրխնացութիւն կայ . Պէջիրեան Էֆէնտի հարցումը պիտո՞՞ն այս կամ այն կէտին համար չէ : այլ գործադրութեան սխաւեւուն համար . ուստի Վարչութիւնը փոխանակ պիտո՞՞ն ցուցնելու ուր հասութիւն և ծախուց հաշիւները գրուած են , կրնար ըսել թէ կը գործադրուի կամ ոչ . պատճառ մը չկար համարատուութեան ձգելու : Այս հրաժարողին մէջ ալ հարցման կծու լեզուին համար ըսած է թէ չենք կրնար հանդուրժել և կը հրաժարինք . բայց կերակուց թէ Քաղ . Ժողովն բաւական ուշադրութիւն չէ ըրած դիւանին պաշտօնադրոյն մէջ այդ կծու լեզուի մասին գրուածներուն . այդ մասին Քիւանը սո՛ գրած է . կրկին կարգամ . « Ժողովը նկատողութեան առաջ հարցանող երեսու փոխանին գործածած ոճոյն և բաւերուն , որոյ « անպատշաճութիւնը Քիւանի կողմէն յատենի « անդ հրապարակեցաւ » : Ահաւորի Քիւանն այս մասին պէտք եղած դեղը գործածած է իւր պաշտօնադրոյն մէջ . եթէ այսբան դեղը բաւական կը համարուի Վարչութեան վերը բուժելու , հրաժարման տեղի չկայ . ուստի նախ կը հարցնեմ Ժողովին թէ Քիւանին գործածած այս դեղը բաւական կը համարե՞՞ք արդեօր :

ՁԱՅՆԵՐ . — Այո՛ , այո՛ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ : — Ուրեմն Քաղաքական ժողովը պէտք է այս կերպով հաստատում առած ըլլայ այդ կէտին համար : Ես հիմա կը հրաժարեմ Միւրայէլեան Էֆէնտին ետ առնել

իւր հրաժարականը և ընկերներն ալ համալրել ետ առնելու :

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս . ԷՖ . — Խնդրեմ այդ գործն ինձ մի յանձնէք . եթէ հրաժարականիս ետ առնուլ պէտք ըլլայ , քանի որ մէկտեղ տուինք , դարձեալ մէկտեղ ետ առնելու ենք . ապէկ կըլլայ որ այդ բաները զրով յայտնէք հրաժարեալ ժողովականաց :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Ուրեմն ուրիշ որտե՞՞տու ունիք հրաժարելու . եթէ այդպէս է , խնդրեմ՝ բացատրեցէք :

ՄԻՔԱՅԷԼԵԱՆ Ս . ԷՖ . — Ոչ , սրտաւոյ դաշնելի կէտն է միայն :

ՆՈՒՐԵԱՆ Յ . ԷՖ . — Բայց արդէն Քիւանին գրած նամակն այդ պատուոյ կէտը շատ գոհացուցիչ կերպիւ կարգադրած է . հարցում մը կայ միայն և հարցում ընել Ժողովին իրաւունքն է . այդ հարցման այո՛ , կամ ո՛չ պատասխան մը տալ կը բաւէր :

ՄԷՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Յ . ԷՖ . — Մայր Քիւանին Քաղաքական ժողովին գրուած նամակը մերտիկ ըրինք , որու մէջ դիւանը բացայայտ կերպիւ հասկցուցած է թէ Ժողովս հարցման կծու դատաւարուց , իսկ Քաղաքական ժողովը հարցման ձևը կծու և անհանդուրժելի է ըսելով կը հրաժարի : Քանի որ դիւանին նամակն այդ կէտը բաւական գոհացուցած է , ըսել է թէ Քաղաքական ժողովը թիւրխնացութիւն մը ունի , և այս կերպիւ իւր հրաժարականը սխալ հասկոցողութեան մը հետեանքը պէտք է համարուի . վասն զի չենք կարծեր որ իւր նպատակը Ժողովին հարցման պատասխան չտալու յամառութիւն և կամ Ժողովին հետ խաղ մը խաղալ ըլլայ : Ուստի՛ քանի որ այժմ Ժողովս ալ բաւական գոհացուցած կը նկատէ այս կէտը , հարկաւ Քաղաքական ժողովն ալ կընդունի և կը յարգէ Ժողովոյս որոշումը : Խնդրոյն այս կէտը վերջացած է ըստ իս , կը մնայ մէկ կէտ մը . Սիմոն Էֆէնտի տուած բացատրութիւնը բաւական համարուի ըսողներ կան . ըլլայ թէ այս կէտն ի վերջոյ դժուարութիւն յարուցանէ . վասն զի Սիմոն Էֆէնտի Քաղաքական ժողովոյ կողմէ չտուաւ իւր բացատրութիւնը . այլ իբրև հրաժարեալ անդամ մը խօսեցաւ . կարելի է որ

Քաղ . Ժողովն ի վերջոյ չընդունի և մերժէ . նոր տուած բացատրութիւնը . ուստի խնդրոյն այս կէտն ալ ըսածուելու է . կամ հարցման պէտք չը կայ ըսելու է կամ հարցումը կրկնելու է :

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ . ԷՖ . — Վարչութիւնը կը հարցասիրուի ոչ թէ երեսօխանն է մը , այլ Ժողովին կողմէ և կը հրաժարի այս հարցաւորման համար . հիմայ դայն նորէն կրկնել կաշուի . ի՞նչ ըսել է այս , չեմ հասկնար :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Սխալ է այդ , Վարչութիւնը կըսէ . նախ լեզուն դատաւարուցէք և յետոյ պատասխան ուղեցէք . աւասիկ իւր նամակը . (հոս Ատենապետ փաշան վերջստիւն կարգաց Քաղ . Ժողովին նամակը և շարունակեց) կը ցուցիմ որ անցեալ նստին ատեն նագրութեան տպագրութիւնը չհասաւ , եթէ հասած ըլլար՝ պիտի տեսնէիք որ գիւանը նոյն օրը յայտարարած է Քաղ . Ժողովին թէ պէտք է նախ հարցման պատասխան տալ և յետոյ դատաւարութիւն պահանջել թէ որ դատաւարութեան տեղի կայ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Դատաւարութեան տեղի չ'կայ , այլ միայն հարցման ոճն անպատշաճ դատուեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Անձնատրութեան խնդիր է , նախ դատաւարուցէք կըսէ :

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ . ԷՖ . — Գրուածքն ուրիշ է , միտքերնին ուրիշ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Աստուած կարողութիւն չէ տուած մեզի որ մտայ դադանիկն ալ խմանանք . իրենց գրութեանն այդչափ կը հասկընանք : Անցեալ նստին ըսի իրենց թէ Ժողովին որոշման պատասխանելու պարտաւարութիւննիդ կատարեցէք , յետոյ Ժողովը նախանձախնդիր կըլլայ ձեր սրտուցն , եթէ անոր դպող կայ . իսկ նա կըսէ , ինչո՞ւ քուէովդ չդատաւարուցիր . ահա եկանք ճիշդ անձնատրութեան խնդրոյն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ . ԷՖ . — Չ'չէ . դատաւարութիւն չ'ըլլար , ոճիր չ'կայ : (Յուզուեք)

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ . ԷՖ . — Միթէ միայն ոճիրը կը դատաւարուի : Մենք Քաղ . Ժողով մը ընտրած ենք , որուն դէմ անարգանք եղած

է յատենի Ժողովոյս . միթէ այդ անարգանքը դատաւարութեան է ըսելն՝ ո՛չ զչափ մեծ բան մ'է որ չ'ընդունուիր Ո՞վ պիտի վարէ այստե՛տե՛տե՛ Քաղ . Ժողովոյ սրտուցն , քանի որ Քաղ . Ժողով մը այսպէս կը նախատուի , և Ժողովոյս կողմանէ հաստատում չտրուիր , հարցումն ընող երեսօխանին՝ իւր հարցաւորին ըստ պատշաճի սրտագրել չտրուելով Քաղ . Ժողովը բաւական չը համարիր դիւանին գրածը . Ազգ . Ժողովոյ սրտուցը չ'ուշադրութեան տուուլ դայն . միթէ՞՛հերի՞ք է ըսել թէ Ժողովը չ'համարիր նորա գործածած բառերուն ու ոճին . Իմեր ներձին Անտոնադրութեան մէջ պատճախան տրամադրութիւնը ալ կան : Ոմանք միշտ կը յեղյեղեն թէ , հարցման իրաւունք ունի Ազգ . Ժողովը՛ . բայց ինչո՞ւ հարեանցի կանցնին՝ ազգային վարչութիւնն ալ ընդդէմ անարգանաց գոհացուցիչ կերպիւ պաշտպանելու անհրաժեշտ պարտը :

ՆՈՒՐԵԱՆ Յ . ԷՖ . — Գժարողարար պարբերութեան մը վրայ է խնդիրը . մէկդի ձգելով ինչ որ վիրաւորիչ մեկնութիւն կրնայ ունենալ այդ հարցման մէջ , խնդիրը կը ըլլնայ . դատաւարութեան հարկ չեմ տեսներ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Մէկդի ձգելով այն բառերն՝ որ վիրաւորիչ են , չենք ընդունիր Քաղ . Ժողովոյ հրաժարականը :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ . ԷՖ . — Այդ բաւական չէ , նորէն պիտի հրաժարի , քանի որ արժանաւոր հաստատում մը չըլլար :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Ատենապետ Փաշային ըսածը շատ ճշմարիտ է . թիւրխնացութիւն կայ : Անցեալ նստին Քաղ . Ժողովոյ Ատենապետի Էֆէնտին ըսաւ թէ Վարչութիւնը հարցման պատասխանը կուտայ եթէ անոր մէջ եղած կծու ակնարկութիւններն ետ առնուին : Հիմայ խոյս կուտայ պատասխանել :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Հ . ԷՖ . — Խոյս տալ ի՞նչ ըսել է . միթէ այս ալ անարգանք չ'է :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Երբոր ժողովը կը ծու ակնարկութեանց դէմ պէտք եղածն ընէ , կը պատասխանենք՝ ըսած էր Քաղ . Ժողովոյ ատենապետի Էֆէնտին : Քիւանն ի՞նչ ըրեր է . մինչդեռ սրտաւոյն էր բուժ խակ հարցման

Թողի՞ր զրկելու, ուղեր է բարեխառնել, հար-
ցապնդման վիրաւորիչ բուսերը զուտը դուրս
ձգեր և ինք նոր թողի՞ մը խմորադրելով զըր-
կեր է Քաղ. ժողովին՝ յուսելոյնեւ թէ Ժողո-
վը հուանաթիւն տուած չէ կծու բաւերուն :
Հիմա կը տեսնենք որ Քաղ. ժողովը բաւական
շահարկելով զիւանին գիրը և իրրե Ժողովին
զգայական արտայայտութիւն չընդունելով՝ կու-
զէ զխոնար թէ ժողովն համալին է արդեօր
Պէշիբեկան կֆէնտի գրոյն : Նարեան կֆէնտի
առաջարկեց և ես ալ կը կրկնեմ՝ որ Մայր զի-
ւանի սխալածագրոյն մէջ ոճի և բաւերու մա-
սին եղած յայտարարութիւնը բաւական գոհա-
ցուցիչ համարելով և այս նկատմամբ Քաղ. ժո-
ղովից հրաժարման անդի չունենալը հաստատե-
լով, հրաժարականը չընդունուի և միանգամայն
հարցման պատասխանը նորէն խնդրուի Քաղ.
ժողովին :

ՆՈՒՐԵԱՆ Յ. ԷՖ. — Հարցման կէտին հա-
մար ես ըսի թէ քանի որ մէկ երեւոյթիւման մը
կողմէ գաղը ծանր կը թուի Քաղ. ժողովին,
Ազգային ժողովն ինք ատանձնելով նոյն հարցու-
մըն իւր կողմէ յղէ այս անգամ Քաղ. ժողովին
և արտասխան խնդրէ :

ԱԼԱՃԱՃԵԱՆ Է. ԷՖ. — Մէկ կողմէ Քաղ.
ժողովին հրաժարականը չընդունիլ և ետ ան
ըսել, իսկ միւս կողմէ Պէշիբեկան կֆէնտի հար-
ցումը յանուն ժողովոյս կրկնել և պատասխան
ուղիք՝ Քաղ. ժողովը տասարել ըսել է : Ի՞նչ
պիտի ըլլայ ազգին մի՞ճակը . Ս. Պատրիարքը
կը հրաժարի . Քաղ. ժողովը կը հրաժարի . աղ-
բային ժողովից պարտքն է՝ այս մի՞ճակը խորին
ուշադրութեան աւանուէ : Այսպիսի ծանր պարա-
զայից մէջ՝ մինչև իսկ իրաւունքներ զոհել արա-
տիւք : Ես կառաջարկեմ որ Քաղ. ժողովին
հրաժարականը չընդունուի և հրաւիրուի իւր
պաշտօնը շարունակել, իսկ հարցման խնդիրն
ետ թողուի և որիչ առթի վերադառնալ : Ապա
թէ ոչ՝ հարցումը նորոգելով որիչ բան չենք ը-
ներ, բայց եթէ Քաղ. ժողովին ըսել թէ ձեզ
չենք ընդունիր :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այդպիսի խօսք մը
ըսելու համար բաւեր չեն պակիր . բայց մեր
մտքն անգամ չանցնիր այդպիսի պահանջում մը
նել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մինչև հիսոյ եղած
խօսքերէն ա՛յ կը հասկցուի թէ՛ Մայր զիւանի
պաշտօնողոյն մէջ զրուած այն բացարձակ յայ-
տարարութիւնը թէ՛ Ժողովը հուանաթիւն չու-
նի, հարցման կծու ընդունիլ բաւական հաստատում
մը կը համարի ժողովը . այն յայտարարութիւնը
պարզապէս կը նշանակէ թէ՛ ժողովը կզգայ ձե-
զի հետ հարցման ընդունիլ կծու ըլլալը և կը մեր-
ժէ զայն : Ըսել կըլլայ թէ՛ Քաղ. ժողովը չէ
կրցեր ըմբռնել այս կէտը, որովհետե՛ առանց իւր
քուէով քատապարտելու կըսէ իւր գրոյն մէջ . . . :

ՄԱՆԿԱՍԱՐԵԱՆ Խ. ԷՖ. — [Ընդմիջելով]
Յայտարարութիւն ըսիք, [Ատենապետ փաշա՛,
բայց ժողովը չէր այն յայտարարութիւնն ընու-
ղը, զիւանին կողմէն էր միայն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն ներկեց, որ
անցեալ նստին առենագրութեան այն մասը
կարդամ, որպէս զի խնդիրը պարզուի, մանա-
ւանդ որ անցեալ նստին բացակայ գտնուողնե-
րէն այսօր ներկայ գտնուող ալ կայ, անոք ալ
հասկնան :

(Ար կարգայ այս խնդրոյն վրայ իւր խօ-
սածները) :

Ա՛հա կը տեսնէք որ տան ինչ որ կը վայ-
լըր այս տեսանին մէջ խօսուած է նոյն օրը .
զիւանին նամակն ալ նորէն կարդամ, (և կար-
դալէ ետև) կը տեսնէք որ ձեր զիւանն ալ այն-
քան վարչութեան կողմը տալեր է, որպէս զի
իւր արժանատաւութեան զուշելու բան մը չը
մնայ . մինչդեռ վարչութիւնը կատարելապէս
գո՛հ ըլլալու էր այս զրուած նամակէս, և եղած
խօսակցութենէն, ընդհակառակն կը տեսնեմ որ
բաւական չէ համարած, և իւր վիրաւորելը
յայտնած է . անոր համար ըսի թէ թխրիմացու-
թիւն ունի :

Ս. ՐԷ՝ անխօսիներ եղած առաջարկութիւն-
ները, քուէի դնելու համար : Առաջարկութեան
մէկն այս է . «Քաղաքական ժողովին գրել թէ
թխրիմացութիւն կայ, Ազգային ժողովը հար-
ցապնդման ձեւին անարտաշահութիւնը ձանձրած
և ետքում է, ուստի ետ առէք հրաժարական-
նիդ, միանգամայն հարցման կարեւորութիւնը
ժողովը տեսած և զայն իւրացուցած ըլլալով,
անոր ալ պատասխանեցէր : »

Միւս առաջարկութիւն մ'ալ կայ որ է .
« Հարցման ձեւին անարտաշահութիւնը ժողովն
ձանձրած և անհաճոյ գտնուած ըլլալը յայտնել
և հրաժարականին ետ առնելու ստիպել, բայց
հարցապնդումն առ այժմ ետ թողալ և որիչ
ժամանակի վերադառնալ » :

Սակայն ըստ որում այսպիսի առաջարկու-
թիւնը գրով և ձեւակերպեալ պէտք է զիւանին
յանձնախն քուէի գրուելէն առաջ, ուստի այն
երկու առաջարկութեանց տէրերը կը հրաւիրեմ
գրի առնուլ և յանձնել զիւանին, որպէս զի
կարենամ քուէի դնել :

ԽՕՃԱՍԱՐԵԱՆ Օ. ԷՖ. — Ղիւանէն կը
խնդրենք որ ցուցնէ՛ որն է այն եպերելի ոճը,
որպէս զի զիւաննք և ըստ այնմ՝ զզուշանանք
այտուհետե :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խնդիրը զոցուեցաւ,
ալ ուրիշ գործ չունինք, առաջարկութիւնները
քուէի պիտի դնեմ :

Յիշեալ երկու առաջարկութիւնը Նուրեան
և Արժանական կֆէնտիներու կողմէն գրով Ղի-
ւանին յանձնուելէ ետև, Ատենապետ փաշան
կարգայ դանձք, որ ահաւասիկ .

Քաղաքակրթիւն Ս.

Նախ՝ Քաղաքական ժողովոյ վեց անգամոյ
հրաժարականը չընդունիլ . վասն զի այդ հրա-
ժարականին ցուցուցած պատճառն, այն է Պէ-
շիբեկան կֆէնտի հարցապնդման մէջ զինքը վի-
րաւորող անարկութիւնը՝ ժողովն իւր Ղիւանին
բերնովն արգէն չէր ընդունած :

Երկրորդ՝ Ազգային ժողովն կը խնդրէ մի-
անգամայն Քաղաքական ժողովն, որ հաճի
պատասխանել թէ՛ Ազգային ժողովին հաւանու-
թեանը ներկայացուցած պիւստձէն կը գործա-
ղը՞ որդեօր, և թէ՛ իրօք ութսուն հազար զու-
րուչի պարտք կա՞յ :

ՆՈՒՐԵԱՆ

Քաղաքակրթիւն Բ.

« Կառաջարկեմք, որ Քաղաքական ժող-
ովն յանուն ժողովոյ խնդրուի ետ առնուլ հը-
րաժարականին, համոզուելով թէ՛ ժողովը եր-

րէք չէ ընդունած և չընդունիր Պէշիբեկան կֆէն-
տի հարցապնդին ոճոյն ու բաւերուն անպատշա-
ձաթիւնը . և միանգամայն յայտարարել Քաղ.
Ժողովոյն, թէ՛ Ազգային ժողովը բոլորովին յին-
քն կատանձնէ այդ հարցապնդումն ընել 'ի զէպ
ժամու » :

(Ստորագր.)
ՇՈՂՈՎՈՒՄ ԱՂԱՏԵՆՍԵԱՆ
ԽԱՃԱՅՈՒՐ ՄԱՆԱՍԱՐԵԱՆ

Յետ ընթերցման, անմիջապէս Ատենապետ
փաշան քուէի գրու նախ՝ Բ. առաջարկութի-
ւնը, զոր ժողովն ընդդէմ 7 ձայնի 2ԸՆԳՈՒՆԵՑԻ
Յետոյ Ա. առաջարկութիւնը քուէի գրու,
զոր ժողովն ԸՆԳՈՒՆԵՑԻ հակառակ 7 ձայնից :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն ըստ որոշ-
ման ժողովոյն Ղիւանը կատանձնէ գրել Քաղա-
քական ժողովին պատասխանը :

Ատենանին փակման կէս ժամ մնացած էր,
երբ Երեւոյթիւմանց մեծ մասը մեկնելու շար-
ժում ցուց տալով՝ Օրտկարգին Բ. խնդրոյն՝
այն է՝ համարակալութեան զիւանի կողմանէ
հաշուէկոթի վերաբերեալ տեղեկագրին ընթերց-
ման անցնիլ չուղեց, և Ատենապետ փաշան
պարտաւորեցաւ ժամ 9 1/2ին առեանը գոցել,
հաւանութեամբ ժողովոյն յայտարարելով որ
յաջորդ նիստը 15 օրէն պիտի գումարի հեաե-
ւեալ Օրտկարգն ունենալով :

Ա. Վ Երազմնութիւն Սահմանադրութեան .
— Քուէարկութիւն Ա. յօդուածոյ :

Բ. Տեղեկագիր զիւանի՞ համարակալութեան՝
Քաղ. ժողովոյ կողմանէ մատուցեալ Հաշուէ-
կընդին վրայ :

Ահաւասիկ տեղեկագիրը՝

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Բ

ՀԱՄԱՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵՐԵՎԱԿԱՆ ՍԵՏՈՒԿԱՆ 1875-76 ՏԱՐԻՆ
ՊԵՏԵՂԻՆ ՎՐԵՑ

Համարակալութեան զիւան, ըստ որոշման
Ազգային ժողովոյ, Կեդրոնական անտուկին
պիւստձէն բններու առեն հարկ չտեսաւ անոր
կերպին վրայ դիտողութիւններ ընել, վասն զի

այդ կէտր կանոնադրութեան մը ստորոքն է : Նախարանիչ զիւանս միայն պիտանկին մէջ ներ, կայացեալ գումարները բնակելով և անոր ման, շամանութեանը վրայ տեղեկութիւն անելով տեսաւ որ :

Ա. Հիւանդանոցի մատակարարութեան հա, շիւր Աեղբունական անտուկէն բողբոլին զատ, ուսած է զիւրութեան համար : որ լուսողոյն մի, ջոյ մ'է, և Աարչութեան Քաղաքական ժողո, մին տեղեկագրին նայելով՝ հիւանդանոցի պիւտ, ճէն իր համարատուութեան մէջ առանձինն պի, տի տեսնուի :

Բ. Պիտանկին մէջ նախորդ երկու տարուան մտարն ու ծախքն ալ նշանակուած էր, և այս տարուան թէ մտոյ և թէ ելից կողմը յաւե, շումներ եղած էին, և մտոյ կողմը եղած յաւե, շումներուն համար Քաղաքական ժողովը կըսէ որ՝ ստոնցմէ ոմանք ստաջուց սյնուէս սահման, ուսած և արդիւնքն ալ այնպէս եղած էր, բայց ետքերը զանազան պատճառներով նուազած էին, և հիւսս այն պատճառները վերցած են, ոմանք ալ նոր արդիւնքներ բլլալով հետզհետէ աւել, նալու վրայ են, և ստոնց համեմատ ծախքին կողմը բրած յաւելումները օրինաւոր կը դատէր :

Գ. Պատրիարքարանի ներքին բարեկարգու, թեան համար հասարակաց սեղանը վերցուցած էր, ստի օրինաւոր էր, վասն զի Պատրիարքա, րանը պաշտօնական տեղ մ'ըլլալով անպատշաճ էր այդ բանը, ինչպէս որ կառավարութեան բո, լոր պաշտօնական տեղերէն ալ վերցած է այդ սովորութիւնը :

Դ. Նաև տեսաւ որ Աեղբունական տրոյ հաւարումը կազն ի կազն եղած է, ստոր համար մեծ ջոնք մը սկսար է և գործունեայ միջոցներ գործածելու է, որ այս տուրքն օրինաւորապէս հաւարուի, վասն զի այնպիսի կարևոր և անհը, բաժեշտ ծախքեր կան, որ Աեղբունական անտու, կին պարտքն է հոգալ և որ մտոյ նուազ ըլլա, լուն պատճառաւ բողբոլին դուրս ձգուած են, ինչպէս են Վաստիարարութեան, Աը, բոնտիան տեղութեան, Ղիւանական և այլն և այլն ծախքերը :

Ե. Այսու ամենայն Աղգային ժողովոյց կորմանէ սահմանեալ նոր կանոնադրութեանը

համեմատ մինչև որ Աեղբունական տրոյ որբա, նութիւնը ճշգիւ չի հասկցուի, Աարչութեան պիտանկին տարողջայեալ շիւտաւարուի, ինչպէս որ ալ ըսած է Քաղաքական ժողովը իր պիտանկի բողբոլութեան մէջ, ուստի Աարչութիւնը այս մասին ամեն ջանք և միջոց ՚ի դարձ դներու է աղգային տուրքին որբանութիւնը հասկնալու համար :

Նկատելով նաև որ արդէն սահմանադրու, կան տարուան կէտը լրացած է և որ հասցիքնե, բուն գանձումը կանոնաւոր վիճակ մը չունին՝ ուստի,

Համարակալութեան զիւանս այս հինգ զըլ, լուար կէտերուն վրայ իր բրած մանրասանն հետադուտութիւնները սցսպէս համաուտիւ տե, ղեկագրերէն ետքը կեղրակայնէ որ՝

1. Աարչութիւնը սարատիան է ամէն հա, ստիկոյ հաւարմանը համար կանոնաւոր և ան, միջական միջոցներ ձեռք առնել, որպէս զի մը, տից կողմը եղած յաւելումներն նշանակուածին պէս գանձորին և ստով միայն ծախուց կողմն ե, դած յաւելումներն կարելի ըլլայ գործադրուիլ, վասն զի Աարչութիւնը սարատաւոր է միշտ Պատրիարքարանը կանոնաւոր վիճակի մէջ պա, հելու համար անհրաժեշտ եղած ծախքերը մէկ կողմէն հոգալ և միս կողմէն հոգ տանիլ որ աղգային սնտուկը բաց չունենայ :

2. Պատրիարքարանի ներքին բարեկարգու, թեան պատճառաւ մատակարարութեան համար եղած կարգադրութիւնը արդարացի է և գոր, ծաղրել պէտք է :

3. Աղգային տրոյ նոր կարգադրութեան գործադրութիւնը վտեթայնել պէտք է :

Ահա ձեր համարակալութեան զիւանին պիտանկին նկատմամբ բրած զիտողութիւնները զորս Աղգային ժողովոյց ուշադրութեանը կը յանձնէ :

23 Հոկտեմբեր 1875
 Ի Կ. Պոլիս ԱՏԵՆԱՊԵՏ
 ՏԵՂԵԿԱՐԵՐ Ե. ԷՍԱԵՆ Ս. Մ. ՂԵՏԻԿԱՅԵԱՆ
 Ս. ՄԻԲԱՏԻԿԱՆ
 Ատեանը դոյուեցու ժամ 9 1/2 ին :
 ԱՏԵՆԱՂԳԻՐ ԱՏԵՆԱՊԵՏ
 Է. Ս. ԱԼԱՏԱՅԵԱՆ Ս. ԱՍԼԱՆԵԱՆ

ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Տ. Խորէն	Եպիսկոպ.	Նար-պէյ	ԱՏՆԱՊԵՏ
2. Տ. Ներսէս	Վ.	Աղանեան	ԱՏՆԱՊԵՏ
3. Տ. Ամբրասիս	"	Իսկէնաղբեան	
4. Տ. Գէորգ	"	Գերձակեան	
5. Տ. Զարայիս	"	Զիւմրիթ ճեան	
6. Տ. Խորէն	"	Կիրոյեան	
7. Տ. Կարապետ	"	Սերոբեան	
8. Տ. Յովհաննէս	"	Փափաղեան	
9. Տ. Արիստակէս	Ք.	Մամբրէեան	
10. Տ. Գրիգոր	"	Երամեան	
11. Տ. Գրիգոր	"	Աճէմեան	
12. Տ. Երեմիա	"	Խաղիւզի	
13. Տ. Արարիս	"	Ստեփաննոսեան	
14. Տ. Վրդանէս	"	Միջաղիւզի	

ԲԱՂԱՅԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1. Սիմոն	Մարտիտեան	պէյ	ԱՏՆԱՊԵՏ
2. Միրոյէլ	Մամիկոնեան	Էֆէնտի	ԱՏՆԱՊԵՏ
3. Արրահամ	Հարենց	"	
4. Աստիա	Իկիտագալեան	"	
5. Խաչիկ	Ալեանաբեան	"	
6. Կարապետ	Փափաղեան	"	
7. Մկրտիչ	Էսաեան	"	
8. Յակոբ	Կաստանդ	"	
9. Յարութիւն	Փափամանեան	"	
10. Սարգիս	Արրահամեան	"	
11. Սարգիս	Արապեան	"	
12. Սիմոն	Միրոյէլեան	"	
13. Սիմոն	Նորասունեկեան	"	
14. Ստեփան	Թնդիրեան	"	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՆ 2 ՂՐՈՒՆԸ

ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՂԵՐԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Գիւանատան Գատրիարքարանի, և Ղալաթիոյ Ս.
Լուսաւորիչ Եկեղեցւոյ լանկայը և Հայ գրադարանաց քով: